ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



WIGMORE

ՄԻԱՍԻՆ ՊԱՇՏՊԱՆԵՆՔ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՆԵՐՀԻՎԱՆԴԱՆՈՑԱՅԻՆ ՎԱՐԱԿՆԵՐԻՑ

Հարգելի՛ խնամող,

Ուիգմորը բազմապրոֆիլ հիվանդանոց է, այստեղ բուժվում են շատ տարբեր խնդիրներ ունեցող փոքրիկներ:

Մեր նպատակը ոչ միայն Ձեր փոքրիկին որակյալ, ժամանակակից բուժում տրամադրելն է, այլև նրան այլ հիվանդություններով վարակվելուց պաշտպանելը:

Մեր ներքին կանոնակարգերը, որոնք գուցե առաջին հայացքից խիստ թվան, միմիայն մեր փոքրիկ բուժառուների անվտանգությանն են միտված:

Անվտանգության կանոնների պահպանման հարցում մենք Ձեր օգնության կարիքն ունենք:

- Աշխատեք անհարկի դուրս չգալ միջանցք: Ընդհանուր տարածքում (միջանցքում) գտնվելու ընթացքում երեխաները կարող են միմյանց փոխանցել օդակաթիլային վարակներ՝ բարդացնելով ու երկարաձգելով բուժումը:

- Հիվանդասենյակի դուռը փակ պահեք:
- Մի սենյակից մյուսը մի՛ գնացեք, մի՛ գրկեք կամ համբուրեք ուրիշ փոքրիկների: Դուք կարող եք վարակը հեշտությամբ մի փոքրիկից մյուսին փոխանցել:

- Թույլ մի՛ տվեք, որ Ձեր երեխան խաղա այլ երեխաների խաղալիքներով. դրանք ևս վարակի փոխանցման պատճառ կարող են դառնալ:
- Ուրիշ փոքրիկների մի՛ նստեցրեք Ձեր փոքրիկի մահճակալի վրա:
- Լվացեք կամ ախտահանեք Ձեր ձեռքերը՝ երեխային շորերը փոխելուց կամ երեխային զուգարան տանելուց հետո, կերակրելուց առաջ:
- Վիրահատությունից կամ բժշկական միջամտությունից առաջ երեխային լողացրեք կամ լվացեք նրա մաշկն օճառով և ջրով:
- Եթե հիվանդանոցում երեխային խնամելու ընթացքում Ձեզ մոտ շնչառական վարակի նշաններ եք նկատում, ապա հնարավորության դեպքում, խնդրեք ընտանիքի այլ անդամի փոխարինել Ձեզ կամ մշտապես դիմակ կրեք:

- Մի՛ դիպչեք երեխայի վերքին կամ կաթետերին: Եթե կաթետերի շրջանում ցավ, այտուց, կարմրություն եք տեսնում կամ եթե վերքից արտադրություն կա, դիմեք բուժքրոջը կամ բժշկին. ինքներդ որևէ միջամտություն մի՛ արեք;
- Հաճախակի օդափոխեք սենյակը: Եթե դրսում ցուրտ է, երեխային տաք հագցրեք և մի քանի րոպեով բացեք պատուհանը:

- Խոհանոցից օգտվելուց առաջ լվացեք կամ ախտահանեք Ձեր ձեռքերը: Սա կօգնի կանխել վարակի տարածումը մի փոքրիկից մյուսին:
- Բժշկական անձնակազմը՝ բժիշկը և բուժքույրը, Ձեր փոքրիկին դիպչելուց առաջ պետք է ախտահանեն ձեռքերը: Եթե ինչ-որ պատճառով նրանք մոռանում են դա անել, մի՛վարանեք հիշեցնել նրանց այդ մասին:
- Խստորեն հետևեք երեխայի խնամքի հետ կապված բժշկի ցուցումներին. խնդիրներ կան, որոնց դեպքում վերը նշված կետերի պահպանումից բացի բժիշկը կարող է առանձնահատուկ ցուցումներ տալ: Եթե այդ ցուցումների հետ կապված որևէ բան պարզ չէ, անպայման պարզաբանեք բժշկի կամ բուժքրոջ հետ:

- Այցելուներին թույլ մի՛ տվեք նստել երեխայի մահճակալին:
- Թույլ մի՛ տվեք հիվանդ հարազատին այցելել Ձեր փոքրիկին:

Հիվանդանոցում բուժվելը դժվար ուղի է թե՛ երեխայի և թե՛ ընտանիքի անդամների համար:

Մեր անձնակազմն անում է ամեն բան այդ ուղին անվտանգ դարձնելու համար, սակայն լիարժեք հաջողության հասնելու գրավականը Ձեր աջակցությունն է ու բժշկական թիմի հետ համագործակցելու պատրաստակամությունը:

ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...

WIGMORE